

Rénshin

ՁԵՎԱՎՈՐԵԼՈՎ
ԱՊԱԳԱՆ



Renshin-ը ներդնում և կառավարում է բարձրակարգ քաղաքաշինական նախագծեր՝ սահմանելով նոր նշաձող անշարժ գույքի ոլորտում և ստեղծելով նորարական կոնցեպտներ ժամանակակից ապրելակերպի համար: Մեր նպատակը ոչ թե քառակուսի մետրի ստեղծումն է, այլ նոր ապրելակերպի ձևավորումը:

Լինելով միջազգային ստանդարտների առաջնագծում՝ մենք օգտագործում ենք առաջադեմ տեխնոլոգիաներ, շեշտադրում կայունության գաղափարը և համագործակցում միջազգային առաջատար գործընկերների հետ՝ իրականացնելով սպասելիքները գերազանցող նախագծեր:

Renshin-ը հանդիսանում է Կառուցապատողների ասոցիացիայի հիմնադիր անդամ, ակտիվ ներգրավված է ոլորտի բարեփոխումների իրականացման գործընթացներում, զբաղվում է օրենսդրական դաշտի կարգավորմամբ և շուկայի մրցակցային միջավայրի զարգացմամբ:

\$2 մլրդ+

Ներդրում

3030+

Բնակարան

188,000 մ²

Կոմերցիոն տարածք
(գրասենյակային,
կրթական, ժամանց,
և այլ)

1 մլն մ²

Ընդհանուր
կառուցապատ
վող տարածք

230+

Համագործակցող
ընկերություններ

110+

Թիմ



WTC Yerevan նախագիծ. Միջազգային համագործակցություն WTCA-ի և ՀՀ կառավարության հետ՝ Հայաստանը համաշխարհային բիզնես ցանցին միացնելու և տնտեսական աճի խթանման շուրջ



Artlife Kempinski Residences նախագիծ. Kempinski հյուրանոցային ցանցի էքզկլյուզիվ գործընկերը Հայաստանում և տարածաշրջանում միակ բրենդավորված համալիրի իրականացնողը և սեփականատերը:



WTC Yerevan նախագիծ. Միջազգային համագործակցություն Colliers International-ի հետ՝ նախագծի կառավարման շուրջ:

Foster + Partners

WTC Yerevan նախագիծ. Համագործակցություն համաշխարհային գիգանտ Foster + Partners-ի հետ՝ համալիրի գլխավոր ճարտարապետության և տեսլականի մշակման շուրջ



World Trade Center Yerevan. Հյուրընկալության աշխարհահռչակ առաջատար Hyatt Hotels & Resorts-ը՝ որպես համալիրի հյուրանոցային և ապարտ-հոթելային բաղադրիչների կառավարող գործընկեր:

LAGUARDA.LOW


Skyline նախագիծ. Միջազգային համագործակցություն Նյույորքյան Laguarda.Low ստուդիայի հետ՝ Հայաստանի առաջին երկնաքերերի ճարտարապետական կոնցեպտի ստեղծման շուրջ

ARUP

Skyline նախագիծ. Միջազգային համագործակցություն Arup ընկերության հետ՝ Հայաստանի առաջին երկնաքերերի ինժեներական լուծումների և քաղաքաշինական նոր եվրոստանդարտների ներդրման շուրջ:


48% ՀՆԱ-Ի ԱճԸ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Հայաստանի ՀՆԱ-ն 2021-2024 ընթացքում




82 % ՄԵԿ ՇՆՉԻՆ ԸՆԿՆՈՂ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԱճԸ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Հայաստանի մեկ շնչին ընկնող անվանական ՀՆԱ-ն 2021-2024 ընթացքում




152 % ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱճԸ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Հայաստանը այցելած զբոսաշրջիկների քանակ



58 % ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԺԵՔԻ ԱճԸ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Կորպորատիվ պարտատոմսերի շուկայի արժեք



SKYLINE

քաղաք քաղաքում
քեզ անհրաժեշտ ամեն ինչը՝ մեկ վայրում

ԸՆԹԱՑԻԿ ՆԱԽԱԳԻԾ

- **ARUP** - Աշխարհահռչակ թիմ կառուցապատման և ինժեներիայի ոլորտում
- **LAGUARDIA.LOW** - Նյույորքյան ճարտարապետություն
- **1508 LONDON** - Ներքին հարդարման համաշխարհային առաջատար



5

Շենք

35

Հարկ

70

Հյուրանոցային
սուիթներ

55,000 քմ

Կոմերցիոն տարածք

350,000 քմ

Կառուցապատվող
մակերես

\$500 մլն

Ներդրում

1550

Բնակարան բարձրորակ
ներքին հարդարմամբ


Անշարժ գույքի զարգացման ոլորտը հանդիսանում է ներդրումային առավել կայուն և ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություններից մեկը՝ հիմնված ֆիզիկական ակտիվների վրա, կառուցվածքային պահանջարկի և տնտեսական զարգացման մեջ իր առանցքային դերի շնորհիվ: Քաղաքաշինական աճը, բնակչության կենտրոնացումը խոշոր քաղաքներում և կենսակերպի փոփոխվող սպասելիքները շարունակաբար խթանում են որակյալ բնակելի, կոմերցիոն և բազմաֆունկցիոնալ նախագծերի պահանջարկը:

Զարգացող շուկաներում ոլորտը ապահովում է լրացուցիչ ներդրումային ներուժ՝ պայմանավորված բարձրակարգ անշարժ գույքի սահմանափակ առաջարկով, հատկապես քաղաքների պատմական և կենտրոնական հատվածներում: Սահմանափակ տարածք ունեցող քաղաքներում, ինչպիսին է Երևանը, նման նախագծերը օգտվում են բնական սակավությունից, ինչի արդյունքում ճիշտ տեղակայված և պրոֆեսիոնալ ձևավորված զարգացումները ցուցաբերում են ավելի բարձր արժեքի կայունություն և երկարաժամկետ աճի պոտենցիալ:


Ոլորտը ներկայումս անցնում է կառուցվածքային փոփոխությունների փուլ, որտեղ առաջնահերթություն են ստանում կայուն զարգացումը, էներգաարդյունավետությունը, բազմաֆունկցիոնալ լուծումները և խելացի ենթակառուցվածքները: Մեկ միջավայրում բնակելի, գործարար, հյուրընկալության և կենսակերպային ֆունկցիաների համադրումը նպաստում է ակտիվների իրացվելիության բարձրացմանը, եկամտային աղբյուրների դիվերսիֆիկացիային և շուկայական ռիսկերի նվազեցմանը:

Ներդրողների համար անշարժ գույքի զարգացումը համադրում է կապիտալի պահպանման և աճի հնարավորությունները: Փորձառու կառուցապատողների կողմից իրականացվող նախագծերը՝ հստակ կառավարման համակարգով, կապիտալի կարգապահությամբ և իրականացված նախագծերի ապացուցված պատմությամբ, առավել արդյունավետ կերպով ապահովում են կանխատեսելի դրամական հոսքեր, ռիսկերի վերահսկում և երկարաժամկետ արժեքի ստեղծում:


ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՔԱՆԱԿ



ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՃԸ ՀՀ ՀՆԱ-ՈՒՄ (%)




Եկամուտներ և զուտ շահույթ (մլրդ ՀՀ դրամ)




- Հասույթ
- Զուտ ֆինանսական եկամուտներ
- Գործառնական այլ եկամուտներ
- Զուտ շահույթ

Ակտիվների կառուցվածքը (մլրդ ՀՀ դրամ)




- Ներդրումային գույք
- Պաշարներ
- Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
- Այլ ակտիվներ

Հաշվեկշռի կառուցվածքը



- Սեփական կապիտալ (մլրդ. ՀՀ դրամ)
- Պարտավորություններ (մլրդ. ՀՀ դրամ)
- Պարտավ./սեփ. կապիտալ

Պարտավորությունների կառուցվածքը (մլրդ. ՀՀ դրամ)



- Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ
- Ստացված ընթացիկ կանխավճարներ
- Կրեդիտորական պարտքեր գնումների գծով
- Այլ պարտավորություններ



Facebook



Instagram



Website

91 BUZAND STR., YEREVAN, ARMENIA

+ 374 11 900 100